## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՔԴՔԿ-Ի ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ

*Սիրելի հոգևոր եղբայրներ, ես զգում եմ, որ այս պահը մեր գիտակցության մեջ երկար պիտի տևի, պիտի մնա ոչ իբրև սոսկ հիշատակ, այլ պիտի դառնա մի մղիչ ուժ, մի նոր գրգիռ՝ դեպի նոր հորիզոններ գնալու մեր հիմնական առաքելության մեջ, որ է՝ կյանքն ապրել քրիստոնեական հավատքի հրամայականի, ուսուցումների առաջնորդությամբ:*

*Կյանքը մերը չէ, կյանքն Աստծունն է, որ տրվում է մեզ իբրև շնորհք, և մեր պարտքն է՝ կյանքն արժևորել այն գաղափարով և նպատակով, որ Աստված տվել է այդ կյանքին: Այդ արվեստը սովորելու դպրոցն է Եկեղեցին, և նրա գործունեությունը մասնաճյուղերն են այդ հիմնական դպրոցի, որի ուսուցիչը Երկնային Վարդապետն Ինքն է՝ Հիսուս Քրիստոս:*

*Կրոնը կրոն կդառնա, ապրում և կյանք կդառնա, երբ ուսուցվի ժողովրդին և յուրացվի ժողովրդի կողմից՝ մանուկ հասակից մինչ խոր ծերություն:*

*Ես անհունորեն երջանիկ եմ, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, դեռևս երջանկահիշատակ իմ նախորդի՝ Վազգեն Ա Կաթողիկոսի կողմից նախաձեռնված, սկզբնավորված և հաստատված Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնին տալիս է նոր թափ, նոր ուժ ու ուղղություն և լայնատարած գործունեության հնարավորություն:*

*Ես անցել եմ այս ճանապարհով, հաճախ գնացել Գայանեի վանք: Այս շենքն այստեղ գյուղատնտեսության պատկանող մի շենք էր՝ ամուլ, անգործ և անիմաստ: Բոլոր շենքերն այդպես են, եթե կյանքով չսնուցվեն: Քարն ու ապակին պիտի փոշիանան, բայց նրանց օգտագործումը մարդկային արժեքների տարածում է, կյանքի երջանկության գաղտնիքներին հասնելու ճամփորդություն: Այդ է, որ արժևորում է շենքերը, որոնք կառուցվել ու կառուցվում են, նորոգվում են նպատակի համար: Դադարենք այլևս մեր շենքերին նայել որպես հուշարձանների: Այս շենքը արժևորեցեք, ձեր գործին նոր երանգ, նոր ալիք հաղորդեցեք:*

*Եթե մեր ժողովրդի հոգին պիտի փոխվի, մեր ազատ և անկախ հանրապետության այս շրջանում, այս մարզում պիտի փոխվի, հատկապես որ մենք այլևս մեր անցյալի ժառանգությամբ մխիթարվող, մենք մեզ գոհացնող ժողովուրդ չենք: Մենք դեպի առաջ գնացող ժողովուրդ ենք՝ ներկան արժևորելով և ապագան կառուցելով ներկայի միջից ձեռք բերված գործունեությամբ: Այս է, իմ հասկացողությամբ, մեր նոր Հայաստանի, մեր նորոգված ժողովրդի կենսափիլիսոփայությունը, եթե հավատարիմ ենք մեր հայրերին:*

*Իմ գնահատանքի խոսքն եմ ուղղում մեր Քրիստոնեական Կենտրոնի տնօրենին, որ լծված է այս գործին՝ իր օգնականների հետ միասին, լինեն նրանք վարդապետ թե քահանա, սարկավագ թե ուսուցիչ:*

*Սիրելիներ, ավելի լավ է մեկ մոմ վառել կամ դառնալ, քան ողջ*

*կյանքում մթությունն անիծել: Մթությունը անիծելով չի փարատվի, այլ ամեն մեկի կողմից մի մոմ վառելով մթությունը կփարատվի մեր կյանքից: Դրան է կոչված Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնը:*

*Իմ գնահատանքի խոսքն եմ ուղղում մեր պետության ներկայացուցիչներին, որոնք քաջալերում են մեր ազգային Եկեղեցու կրոնական-դաստիարակչական առաքելությունը, որովհետև հավատում եմ, թե իրենք էլ հավատում են, որ առանց բարոյական և հոգևոր արժեքների մի ազգ չի կարող երկար դիմանալ, և դրա մեջ է մեր պետության ակնկալությունը մեր Եկեղեցուց: Մենք էլ սպասում ենք, որ մեր պետության ներկայացուցիչներն էլ զորավիգ կանգնեն այս սուրբ գործին, ազգակերտ և առողջ գործին, հոգևոր և բարոյական հիմքերի վրա:*

*Վերջապես ես ուզում եմ իմ խոսքն ուղղել մեր սիրասուն աշակերտներին: Դուք մի փոքրիկ խումբ եք՝ հազարավորների միջից ընտրված և այստեղ հավաքված: Անուշ երգեցիք «Հրաշափառ», «Ուրախ լեր Սուրբ եկեղեցի», «Էջմիածինն ի Հօրէ» շարականները: Ձեր մեղմ ու անուշիկ ձայնը մինչև երկինք հասավ, և ես զգացի, որ Աստված լսեց ձեր ձայնը, որը ոչ միայն դեպի երկինք հասավ, այլև այս վանքի բակում թաղված հոգևորականների ոսկորները շունչ առան ձեր ձայնով: Ձեզ համար են այս բոլոր զոհողությունները, որոնք, վստահ եմ, որ պիտի հասնեն իրենց նպատակին:*

*Իմ խոսքն ուղղում եմ ծնողներին. ձեր զավակների կյանքը ձեր կյանքն է, և որքան նրանց կյանքը ձեզ երջանկություն կբերի, այնքան երջանիկ կլինեք ձեր կյանքում:*

*Ծնողը ոչ թե երեխային պիտի ուղարկի եկեղեցի, այլ ձեռքից պիտի բռնի և տանի: Դուք եղեք իմ թարգմանները: Եկեղեցին մենք ենք՝ բոլորիս գործակցությամբ, հետևաբար, տարածեք այս գաղափարը և կիրակի օրը ձեր կյանքում դատարկության օրերի չվերածեք, այլ հոգևոր լեցուն օրերի:*

*Կենտրոնի բացման առիթով իմ շնորհակալությունն եմ հայտնում այն անձերին ու հաստատություններին, որոնք իրենց մասնակցությունը բերեցին շենքի վերանորոգմանը, այդ թվում՝ Լոս-Անջելեսի Լինսի հաստատությանը, նաև՝ Հայ Ավետարանչական Եկեղեցուն:*

*Նյութը հոգիացնենք և իմաստը արժևորենք:*